

ՏԵԴԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԼԵԶՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Ն. Հ. ԴԻԼՍՏՐՅԱՆ

Տեղանվանագիտությունը չի հայտնագործում նորահայտ ու ինքնակերտ բառեր՝ յուրահատուկ բառակազմական կաղապարներով ու քերականություններով, տեղանունները ծնվում են ընդհանուր խոսակցական լեզվի սովորական բառերից և ենթարկվում համապատասխան ձևափոխությունների: Սակայն այսպարզ իրողությունն ունի տրամաբանական իր զարգացումը. բառը, դառնալով տեղանուն, հաճախ սուանց որևէ հնչյունական արտաքին փոփոխության կտրուկ սահմանազատվում է իրեն ծնող բառարանային միավորից, այսինքն՝ գրկվում է իր ելակետային իմաստից. թեև այդ իմաստը կարող է դուրսավ գուշակվել: Ո՞ւմ է Անձրեխ տեղանունը պատկերանում որպես հորդառատ շիթերով անձրև, կամ Հուր-ը, Քոցիկ-ը՝ իբրև կրակի փայլատակում, բացի, իհարկե, առաջին անգամ դրանք լսող անծանոթ ունկնդրից: Խավաբաձոր կոչված գյուղում և՛ արշալույսն է բացվում, և՛ սվնջյան արևն այրում: Տեղանվան իմաստային բովանդակության վերլուծությունը հանգում է երեք ենթաշերտերի վերհանմանը, որոնց դիրքային փոխհարաբերությունները կարելի է արտահայտել եռաստիճան սանդղակով, այսինքն՝ նրանք բխում են մեկը մյուսից: Ա) Ելակետային իմաստ, որը տեղանվան հիմքում ընկած բառարմատի կամ բառարմատների բառարանային իմաստն է, այն կարելի է կոչել նաև մինչտեղանվանական իմաստ, Բ) բուն տեղանվանական իմաստ, այսինքն՝ քարտեզում ամրագրված որոշակի օբյեկտի նշանակում (այդ օբյեկտը կարող է լինել նաև ոչ իրական, ինչպես գեղարվեստական գրականության մեջ՝ Մմսկուտ, Հիմարաստան, Երկիր Ավետյաց և այլն), Գ) հետտեղանվանական իմաստ, որը տեղանվան մեջ ձևավորված փոխաբերական իմաստն է: Այն հավելուրդային է, բնորոշ ոչ բոլոր տեղանուններին: Մանրամասնե՞ք. մինչտեղանվանական իմաստի մասին երկար խոսելու հարկ չկա. միայն նշենք, որ տեղանունները տարբեր արագություններ և տարբեր շափով են կորցնում իրենց նախնական իմաստները: Եթե այդ նախնական իմաստները լրիվ պահպանվեին ու գործառնեին, ապա տեղանուն հասկացությունն ինքնին ավելորդ կդառնար, գոյություն կունենային ընդամենը հասարակ գոյակառններ կամ ածականներ, առավելագույնը՝ բառակապակցություններ՝ կիրառական որոշ յուրահատկություններով՝ արեզ, անձավ, կարմիր, արծաթ լեռներ, ճապաղ գետ... Տեղանունների մի մասը, ընդ որում գրանք հնադույն շերտի տեղանուններն են, իսպառ կորցրել է ելակետային իմաստը, օրինակ՝ Գվին, Անի, Արաբս, Արագած..., իսկ մի ղգալի մասը այս կամ այն շափով անխաթար պահպանում է դա՛ անգամ բուն տեղանվանական իմաստի համեմատությունով՝ Զովասար, Զարդախաչ, Շամբ, Լուսինք, Միրանահող, Հազարափրկիչ, Օխտը դոներ, Կարմիր Ավետարան... Այս երկու հակառակ բեկոների միջև էլ բաշխվում են բոլոր տեղանունները՝ իրենց ողջ բազմազանությամբ: Նախնական իմաստի պահպանումը տարբեր աստիճանի է՝ մի դեպքում ակնհայտորեն

զգալի, մի դեպքում դժվարըմբռնելի: Մինչտեղանվանական իմաստի մթադ-
նումը կատարվում է և՛ ներլեզվական, և՛ արտալեզվական պատճառներով:
Այսպես՝ տեղանունը ստեղծող էթնիկական խմբի լեզուն կարող է անհետա-
նալ պատմական թատերաբեմից, ձուլվել այլ լեզուներին՝ Վան, էրեբունի,
Տարոն, Արծն (Աղձն)...., կամ օտարախոս ժողովուրդները կարող են աղավա-
ղել, աղճատել նրա հնչյունական պատկերը՝ Ղափան—Կապան, Գյումրի—
Կումայրի...., նման ձևափոխություններ տեղանունը կարող է կրել նաև սե-
փական լեզվի բարբառների ազդեցությամբ՝ Այծասար—Իծասար, Արնատեր—
Արնքատեր, Ականջք—Անգջիք, Եղբարք—Ախպերներ...., կամ էլ տվյալ լեզվի
պատմական, բնականոն զարգացման ընթացքում այդ բառաձևերը կարող են
դուրս մղվել ընդհանուր գործածությունից՝ Անգեղց բերդ—Անգղների, Գոհա-
նամք—Գոհանում ենք, Երից Մանկանց—Երեք զինվորների... Առավել սովո-
րական են բառաքերականական փոխանցումները, երբ ինքնուրույն բառար-
մատը վերածվում է բառակազմական ձևային, կամ բառահարաբերական ձե-
վույթն է դառնում բառակազմական: Կուսապատ, Վաղարշապատ, Սարգաթա-
պատ, Մովսապատ— այս տեղանունների երկրորդ բաղադրիչը՝ պատ-ը, ար-
մատ է, բայց վերածվել է տեղանվանակերտ ածանցի, նույնը վերաբերում է
շատ արմատին՝ Արտաշատ, Արշամաշատ, Բարգուշատ... Ինչպես պատկե-
րավոր արտահայտվում է Վ. Ա. Նիկոնովը. մինչտեղանվանական իմաստը,
մրցանակ է, որը կարող է և՛ տրվել, և՛ ոչ, իսկ երբեմն այն վերածվում է
ժանր ժառանգության¹. այսպես՝ Նորակերտ-ը անվամբ հավերժ նոր է, Մեծ
և Փոքր Պարնինները, անկախ իրենց այժմյան չափերից, մնում են որպես այդ-
պիսին: Մինչտեղանվանական իմաստը հաճախ կարող է լինել դիպվածային,
այսինքն՝ շարտահայտել օբյեկտի էությունը. Տանձառում կարող է տանձ ընդ-
հանրապես չաճել: Ելակետային և բուն տեղանվանական իմաստները շեն ըս-
պառում տեղանվան բովանդակությունը: Տեղանուն դարձած բառի մեջ կարող
են զարգանալ նոր իմաստներ՝ կապված արդեն անվանակիր օբյեկտի հետա-
գա պատմական ճակատագրի հետ: Տեղանունը բաժանում է իրեն կրողի ճա-
կատագիրը՝ թե բաժին ընկած փորձությունները, թե փառքի դափնիները: Տե-
ղանունը կարող է դառնալ տվյալ տեղում արտադրվող ապրանքների, իրերի
տեսակային հասարակ անուն՝ քաջմիր, կոնյակ, շամպայն, բորդո և այլն,
կամ պատմական բեկումների, ազգային վերածնունդի, համամարդկային նվա-
ճումների խորհրդանիշ: Այս գործընթացները հանգեցնում են ներխոսքիմա-
սային նոր տեղաշարժի. տեղանուն դարձած հասարակ գոյականը վերստին
վերածվում է հասարակ անվան՝ բայց իմաստային այլ բեռնվածությամբ: Սա-
րգաթապատ տեղանունը ժողովրդի հավաքական ուժի անպարտելիության բա-
ռային մարմնավորումն է. «Ամեն ժողովուրդ իր սարդարապատն է տոնում»,
Արարատ-ը ազգային սրբություն սրբոց է նշանակում. «Այդ գետը իմ ոռու
ընկերոջ հոգու արարատն էր», Շառլի-ն ազատագրական պայքարի հաղթար-
շավի արտահայտությունն է դարձել. «Դեռ քանի շուշիններ են սպասվում ազ-
գային երազի իրականացման ճանապարհին»...

Ինչպես ելակետային իմաստը, այնպես էլ հետտեղանվանականը ինչ-որ
չափով հավելուրդային են, այսինքն՝ կարող են և՛ լինել, և՛ չլինել. դրանք
տեղանվան անհրաժեշտ, բայց ոչ պարտադիր տարրերն են: Ընդ որում, եթե
ելակետային իմաստ, որպես կանոն, ունեն բոլոր տեղանունները. նրա կո-
րուստը կամ մթազնումը կապված է ժամանակի հետ, ապա հետտեղանվա-
նական իմաստը կարող է ընդհանրապես չզարգանալ:

Տեղանունների բովանդակային յուրահատկություններից մեկն էլ նրանց

¹ Տե՛ս В. А. Николов, Введение в топонимику, Москва, 1965, էջ 60:

անթարգմանելիությունն է. տեղանունը միջլեզվական միավոր է, որովհետև անհնար է պարզել, թե նրա իմաստային կողմերից որին պետք է նախապատվություն տալ թարգմանության ժամանակ՝ ծագումնաբանական, թե նրա տեղանվանական իմաստին. բայց դրանցից ոչ մեկը բնավ չի արտահայտում տեղանվան ողջ բովանդակությունը, թեև լեզվական նման հապճեպ մոտեցումներ կան. Բարեկամություն— Дружба և այլն:

Տեղանունների բովանդակային կառուցվածքով են պայմանավորված ներքանց երեք գործառույթները. Ա) ծառայի որպես հասցե, այս գործառույթը առաջնային է և որոշիչ, Բ) ըստ հնարավորության բնորոշել անվանվող օբյեկտը, նկարագրել այն՝ խոնավ լեռներ—անձրևային լեռնաշղթա է, Արծաթասար—ընդերքում արծաթի հանքավայրերի առկայություն, Խնձորուտ— գյուղը հայտնի է խնձորի այգիներով, Քարինասակ— գյուղը սկզբնավորվել է լեռնային զանգվածի գոգահովտում, Որոտան— արագահոս, շառաշուն գետ է և այլն: Այս գործառույթը հիմնված է տեղանվան բաղադրիչների նախնական իմաստների վրա, հետևաբար երբ դրանք դադարում են դիտակցվել, ջնջվում են, տեղանվան բնութագրիչ-նկարագրական արժեքը վերանում է: Այս գործառույթը կարող է վերանալ նաև այն դեպքում, երբ օբյեկտը բնականոն զարգացման հետևանքով կորցնում է իր սկզբնային որակները՝ ձեռք բերելով նորերը, որոնք անհնար է արդեն արտահայտել անվան մեջ: Օրինակ՝ ԳետաՎեջ կոչվող գյուղն օղակող գետերը կարող են շտրանալ և հունի հետքերն անգամ չպահպանել, բայց գյուղի անունը դրանից չի փոխվի, նույնը վերաբերում է նաև վաղուց եղբգնուտները կորցրած, սակայն ավանդաբար Ծամրուտ կոչվող բնակավայրին, և այդպիսիք մեծաթիվ են: Գ) Տեղանունների վերջին գործառույթը գաղափարական է, աշխարհագրական օբյեկտի կամ բնակավայրերի անվանումը ոչ միայն նշան— նկարագրություն է, այլև գաղափարակիր միավոր՝ զգացմունքային որոշակի դունավորմամբ: Տեղանունը կարող է լինել ոչ թե սոսկ իրական երևույթի կամ փաստի արձանագրում, այլ նրա երազանքը, սպասումն ու ձգտումը, ինչպես՝ Արևաստան, Վերածնունդ, Զարթոնք, Արշալույս, Ծրջանկաբեր, Խաղաղություն, Բարեկամություն և այլն²:

Այժմ փորձենք պարզել տեղանունների ստեղծման հիմքը, ներքին տրամաբանությունը: Առաջին հայացքից պատահականությունների տիրույթից ծնվող տեղանունները իրականում դասավորվում են կանոնավոր համակարգի մեջ, պետք է միայն բացահայտել նրանց առաջացման խորքային պատճառները: Տարեբայությունը չգիտակցված օրինաչափությունների հետևանքն է: Ընդհանուր լեզվի բառապաշարի լոկ աննշան ու սահմանափակ մասն է, որ այլևայլ տարբերակներով դառնում է տեղանունների հենք, նույնը վերաբերում է բառակազմական կաղապարներին և քերականական ձևերին: Այսպես՝ բնության երևույթներ նշանակող առև, ասող, լույս, ևաբ, դաշտ, լեռ, լիճ, ծով, գետ արմատներից հազարավոր տեղանուններ են կազմվել, իսկ բազմաթիվ այլ համագործածական բառերից մեկ տասնյակ տեղանուններ էլ զգվար է պեղել:

Բոլոր ժամանակներում խիստ գործուն է տեղանունների սեռականաձև կառուցվածքը՝ Մաղկանց, Թորոսենց, Աստղկան, Արեգին, Կուսանաց, Ակնա, Յոթնանձանց, Ակնչի, Բագինի և այլն: Իսկ բացառական, ներդոշական, կամ գործիական հոլովով տեղանունները խիստ սակավ են:

Նվազական-փաղաքշական ալկ, ուկ, իկ կամ տեղ ցույց տվող ուտ ածանցով տեղանունները շափազանց գործուն են՝ Լուսնակ, Լճիկ, Մովակ, Գորտուկ,

² См. В. А. Никонов, *Сл. яз.*, էջ 51—64, А. В. Суперанская, *Общая теория имени собственного*, Москва, 1973, էջ 250—276:

Բոցիկ, Դաշտակ, Կեփկ, Գետիկ, Լորենիկ, Եղեգակ, Դարախոտիկ, Արծվանիկ, Քթենիկ, Բոխուտ, Քթուտ, Խնձորուտ, Մմակուտ, Քեղուտ... Իսկ անոց,, ուրյուն, արան, իչ և այլ քաջածանոթ ածանցներով տեղանունները մատնների վրա կարելի է հաշվել:

Քերականական ձևերի վերաբերյալ պետք է նշել, որ դրանք մեծամասամբ դուրս են մնում տեղանվանաստեղծման գործընթացից. բառերի ուղիղ ձևերը ավելի նախընտրելի են, քան թեքվածները: Տեղանունների մեջ գործածական դարձած քերականական ձևույթները հաճախ կորցնում են իրենց բուն իմաստը՝ վերածվելով բառակազմական ձևույթների: Այսպես՝ հոգնակիակերտ մասնիկները, դրվելով տեսակային աշխարհագրական եզրերի կամ բուսանունների, կենդանանունների վրա, արտահայտում են ոչ թե նշանակվող օբյեկտների մեկից ավելի լինելը, այլ տեղանվան ցուցիչ են դառնում՝ Լինք, Դաշտք, Միլք, Զուլք, Այրք, Կաթիլք, Մաղկալնք, Արմտիք, Ասաղուլնք, Լուսինք, Կիժ հողեր, Աղի ջրեր, Արտեր, Գետեր, Մովեր և այլն: Ք, ունք, անք, իք, ինք, եք և հոգնակի սեռականի՝ անց, ուց, ոց, աց, յաց, ից և նման մյուս վերջավորությունները՝ թե գրաբարյան, թե աշխարհագրարյան, դարձել են տեղանվանակերտ ածանցներ: Բերկնք ձևով հոգնակի սեռական տեղանունների օրինակներ կս՝ Թարգամնչաց, Թագավորաց, Թուչնոց, Դարբնաց, Եզանց, Թերդաց, Կուսանաց, Անկշտանց, Անձևացյաց, Եկեղյաց... Այս կառուցվածքները ժազումնաբանորեն, իհարկե, կրճատված բառակապակցություններ են՝ հասակացուցիչ-հատկացյալ: Եղել է Թագավորաց բերդ, Դարբնաց, Անկշտանց գյուղ, Եկեղյաց դավառ, Կուսանաց կղզի..., ժամանակի ընթացքում երկրորդ բաղադրիչն ընկել է: Գրարարյան քերականական վերջավորությունները արդեն ամբողջությամբ են վերածվել ածանցների, իսկ աշխարհագրարյան ձևերում քերականական իմաստը դեռևս ուժեղ է, սակայն արդյունքը միանշանակ է: Բառակազմական ձևույթները ևս իմաստափոխվում են՝ դառնալով տեղանվանագիտության սեփականությունը, այսպես՝ նվազական ածանցները դադարում են գիտակցվել որպես այդպիսին: Զորակ, Միբանիկ, Լճիկ ձևերը բնավ էլ չեն նշանակում փոքր ձոր, ծիրան կամ լիճ, դրանք բնակավայրերի անուններ են, ընդ որում այդ բնակավայրերը շտաբերով կարող են բավակալին մեծ լինել:

Տեղանունը լեզվի բաղադրիչներից է, բայց «ընտրյալ» բաղադրիչը: Բայաձևերի, թվականների, դերանունների, ծառայողական խոսքի մասերի գոյությունը տեղանվանաստեղծության մեջ գրեթե աննշան է: Ի վերջո, լեզվական մեծ ենթահամակարգերը միշտ էլ օժտվում են հարաբերական ինքնուրույնությամբ, այսինքն՝ ընտրելու և ձևափոխելու ազատությամբ:

Տարբերային ու կամային անվանակոչման ժամանակներն անցել են. այժմ առանձին անհատը, տեսնելով իր առջև առաջին անգամ սփռվող լուսառատ հովիտը, եթե անգամ բացականչի էլ՝ լուսաշխարհ, ապա միևնույն է, այն չի կարողանա դարձնել տեղանուն: Քաղաքակրթության ու ազգային ինքնագիտակցության վերագտնումի մեր հախուռն ժամանակներում անվանադրությունը պիտի դառնա նախապես ծրագրավորված, գիտակցական-քաղաքականություն՝ հեռահար քարոզչական ու դաստիարակչական նպատակներով: Այն պիտի ուղղված լինի դեպի ազգային հոգեբանության ուժեղ կողմերը, ձևավորի ընդհանրական մտածելակերպ, արթնացնի ժամանակին անհրաժեշտ արամադրություններ, և ամենակարևորը՝ ստեղծի միավորող սրբություններ՝ կուռքեր, եթե անհրաժեշտ է, և անջրպետներ՝ «ի հարկէ և ի պէտս»: Այս ամենն անկարելի է իրագործել կամային եղանակներով, քանի որ տեղանվանության մեջ շնչի կարող ամրակալվել բովանդակությամբ օտար և ձեվով անսովոր կառույցներ՝ խիստ սակավ բացառություններով (Մալիշկա,

Շուտունուխ): Տեղանունն ի վերջո հասարակական գիտակցութեան ծնունդ է. նրա և անվանվող օբյեկտի կապը պայմանական է: Անվանադիր անձի կամ անձերի դերը վճռորոշ է. տեղանունն արտահայտում է անվանադիր հանրութեան գաղափարներն ու զգացմունքները, աշխարհընկալումը: Օրինակ՝ Անդրեկովկաս տեղանունը ճիշտ է միայն անվանակոչող ժողովրդի հայեցակետից, հակառակ կողմի համար այն Այսրեկովկաս է, այնուհանդերձ պատմական և լեզվական պատճառներով գործառում է առաջինը, թերթերում հանդիպող անվանափոխման երկշտ փորձերը ապարդյուն են: Այսպիսով՝ աշխարհագրական գործոնը, որն առաջին հայացքից թվում է էական, իրականում երևութական է: Անվանվող օբյեկտներն ունեն բազմազան հատկանիշներ. գետը կարող է լինել որոտնաձայն, ոլորապտույտ, կարմրաշուր, քարքարոտ և այլն, բայց հատկանիշների այս ամբողջությունից ընտրվում է, ամրակալվում որպես անուն միայն մեկը, դիցուք՝ կարմրությունը — կարմիր գետ: Անվանման գործընթացում բացի օբյեկտի իրական հատկանիշներից ոչ պակաս կարևոր է նրանց ընտրութեան պահը: Հատկանիշի առանձնացումը կախված է ոչ թե աշխարհագրական պայմաններից, միջավայրից, այլ անվանակոչող անձի կամ խմբի դիրքորոշումից: Անվանաստեղծման ժամանակ առարկայի հատկանիշներից որևէ մեկին տրվող նախապատվությունը թելադրված է հասարակության պատմական զարգացման աստիճանով: Տվյալ պահին էականն այն է, որ լեռը նման է գահի, իսկ հաջորդ պահին էական է դառնում ընդերքում հայտնաբերված արծաթի հանքաքարը: Օբյեկտի բնական հատկանիշներ նշանակող տեղանունները գերիշխում էին մարդկության պատմության վաղ շրջանում, դրանք աստիճանաբար նվազում են բնութեան հանդեպ մարդու իշխանութեան աճմանը զուգընթաց:

Տեղանվանության մեջ որոշիչ գործոնը պատմականությունն է, որովհետև նրանով է պայմանավորված անվանման այս կամ այն սկզբունքին տրվող առավելությունը՝ Ա) ըստ արտաքին հատկանիշների, Բ) ըստ պատմական դեպքերի, անձերի, Գ) ըստ գաղափարական կամ զգացմունքային զուգորդումների և այլն: Առաջին տեղանունները տեսակային հասարակ գոյականներ էին կամ օբյեկտների աշխի ընկնող հատկանիշների նկարագրություններ, հետագայում դրանք սկսեցին ձեռք բերել կրոնական-պաշտամունքային բովանդակություն՝ մարդկանց կրոնական գիտակցության աստիճանին համապատասխան՝ կենդանապաշտություն, բնապաշտություն, հեթանոսական բազմաստվածություն, ապա միաստվածություն:

Եթե տեղանվանաստեղծման վաղ շրջանում՝ տոհմացեղային, ըստ աշխարհագրական օբյեկտների կոչում էին նաև տեղաբնակներին՝ Անգեղյանք, Անձևացիք և այլն, ապա հաջորդ շրջանում տեղի է ունենում հակառակ երևույթը. աշխարհագրական օբյեկտները իրենց անունները ստանում են ըստ տեղաբնակների էթնիկական պատկանելության՝ Հայոց ձոր, Դրունք Ասորվոց, Դրունք Հայոց..., ավելի ուշ անվանման հիմք են դառնում անձնանունները՝ տոհմապետի, քրմապետի և, իհարկե, աստվածությունների՝ Երվանդունիք, Արծրունիք, Գագկաշեն, Անահտաձոր, Արամազդ, Գիսանե և այլն: Ավատատիրական ժամանակաշրջանում անվանումների առաջացման հիմքում արդեն ոչ թե ի՞նչ կամ ինչպիսի՞ հարցն է, այլ ո՞ւմն է, այսինքն՝ սեփականատիրոջ իրավունքը, օրինակ՝ Ռշտունյաց աշխարհ, Խանի գյուղ, Խանի կամուրջ, Եկեղեցու խուֆ, Կաթողիկոսաց սար, Կաթողիկոսի բերդ, Թաթուլի բերդ, Եպիսկոպոսաձոր... Առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը ևս իր կնիքն է դնում տեղանունների վրա: Քաղաքակրթության առաջնորդների զուգընթաց առաջնային են դառնում անվանման բարոյահոգեբանական, քաղաքական հիմքերը և կողմնորոշումները:

Յուրաքանչյուր անվանում կ' տարրորոշում է տվյալ առարկան մյուսներից, կ' միավորում նույնասեռ այլ առարկաների հետ: Ցանկացած հայ, եթե անգամ նա պատմությունից գաղափար չունի, լսելով Վաղարշապատ, Տիգրանակերտ, Մովսեսի շիրակ, կհասկանա, որ դրանք քաղաքատիպ բնակավայրերի անուններ են: Տեղանունների բնորոշ հատկանիշներից է համեմատականութունը, որի հիման վրա էլ կազմվում են տեղանունների գծային շարքերը: Շարքի առաջացման համար հիմք կարող են դառնալ տարբերորակներ՝ թե տարածածամանակային, թե ազգային-կրոնական: Ամենատարածվածը երկանդամ հակադրություններն են՝ հին—նոր, բարձր—ցածր, մեծ—փոքր, ներքին—արտաքին, թեև բացառված չեն եռանդամ և ավելի շարքերը՝ ստորին—միջին—վերին, առաջին—երկրորդ—երրորդ... Այսպես՝ ներքին Բեվեռաթափ—Արտաքին Բեռաթափ, Մեծ Ագուլիս—Փոքր Ագուլիս, Հին Գրախտիկ—Նոր Գրախտիկ, Բերդակ Հին—Բերդակ Նոր, Ներքին Անձր (Անզր)—Միջին Անձր—Վերին Անձր, Գերավենդ Առաջին—Երկրորդ—Երրորդ, Արաբ Առաջին—Արաբ Երկրորդ, Գերգեր Հայ—Գերգեր Ռուս, Դվին Ասորու—Հայի Դվին—Քրդական Դվին, Հայի Գետաբեկ—Թուրքի Գետաբեկ և այլն: Հաճախ համեմատվող եզրերից մեկը բացակայում է. այդպիսին սովորաբար լինում է շարքի սկզբնական տեղանունը՝ գլխաբառը՝ Արսենյակ—Արսենյակ Մյուս, Աղուսար—Աղուսար Արևմտյան, Բագարան—Բագարան Մյուս, Հաճն—Նոր Հաճն, Թութակ—Թութակ Փոքր, Հայք—Բարձր Հայք, Արմավաշեն—Ներքին Արմավաշեն... Տեղանվանական շարք կարող է կազմվել նաև ըստ որոշիչ որակային ածականների՝ Թթու ջուր—Քաղցր ջուր—Ճապաղ ջուր—Սև ջուր—Սպիտակ ջուր—Խոտոր ջուր—Հով ջուր... Կանաչկող—Կապուտկող, Գեղին գետ—Կարմիր գետ—Գիծ գետ... Որոշ այսպիսի շարքեր գրեթե անվերջ շարունակելի են: Գործուն են նաև ըստ ածանցների կամ քերականական վերջավորությունների շարքերը՝ Անկշտանց—Անփայտից—Անճղոց—Անջրոց և այլն:

Ակնհայտ է, որ զուգադրականութունը տեղանունների հիմնային հատկանիշներից է թե բովանդակության, թե ձևի տեսանկյունից, և յուրաքանչյուր տեղանուն ծնվում է այլ տեղանունների շարքերի հատման որևէ կետում³: Այդ կետի որոնումն ու հստակեցումը զուտ լեզվաբանական խնդիր չէ, այն ունի որոշակի պատմամշակութային արժեք: Խառնակող շարքերի օրինքը հնարավոր է դարձնում բացահայտել տեղանունների կորուսյալ ակունքները՝ իմաստային, բառակազմական, քերականական: Շարքի պահպանված անդամների օդնությամբ վերականգնվում են ելակետային անխաթար ձևերը: Բացի այս՝ շարքի սկզբունքը դյուրացնում է հետագա անվանակոչման գործընթացը, որովհետև ապահովում է ժառանգական կապը անցյալի և ներկայի, թեև լադրում է տեղանունների համապատասխան կաղապարներ՝ տրամաբանորեն հստակ և հիմնավոր:

Տեղանունը, ինչպես ցանկացած լեզվական միավոր, ունի իր կենսագրութունը և ճակատագիրը, նա գոյանում է, փոփոխվում և որոշակի գործունեներից կախված՝ անհետանում: Տեղանունների անհետացման պատճառները հիմնականում ոչ լեզվական են: Բնության քմահաճույքների հետևանքով բազմաթիվ աշխարհագրական օբյեկտներ ու մարդկային բնակավայրեր են վերանում, եթե անգամ բնությունն էլ բարեհաճ է, ապա անխուսափելի է պատմությունը՝ զարգացման իր անկանխատեսելի ոլորաններով. օտար նվաճողները, գաղափարաքաղաքական հեղաշրջումները բերում են նոր անվանումներ՝ նախորդները մատնելով բռնի մոռացության: Այս տեսանկյունից առավել կայուն ու երկարակյաց են բնական օբյեկտների անվանումները, նրանք

³ Յու՛ս Ե. Ա. Никомов, Աշխ., էջ 33—39:

հարաբերականորեն պաշտպանված են ճակատագրի հարվածներից, նույնը չի կարելի ասել բնակավայրերի անունների վերաբերյալ: Զրային օբյեկտների և լեռների անունները միշտ ավելի հին, արխաիկ կազմութուններ են, հետևաբար ավելի դժվար ստուգաբանվող, բայց ավելի հետաքրքիր տեղանվանագիտության և ընդհանրապես պատմության հարցերով զբաղվող գիտնականների համար: Բնակավայրերի անուններն անմիջականորեն ներթաշված են պատմական գոյամարտի մեջ, այսինքն՝ իրադարձությունների խառնարանում: Բնության երևույթները շեղոք են, պատմական անցքերը սակավ են անդրադառնում նրանց վրա, միակ վտանգը բնական-կլիմայական փոփոխություններն են: Տեղանվան կայունությունը կախված է ոչ միայն անվանվող օբյեկտի բնույթից, այլ նաև նրա մեծությունից՝ և բուն, և փոխաբերական իմաստներով: Որքան կարևոր ու նշանակալի է ավյալ օբյեկտի դերը հասարակության կյանքում, այնքան ավելի մնայուն է նրա անվանումը: Կայունության այս շահանիշը ուսումնասիրողներին դրդում է առավելությունը տալու խոշոր միավորների անունների քննությանը, սակայն միկրոտոպոնոմիկան՝ փոքր աշխարհագրական օբյեկտների՝ մարգագետիններ, բացատներ, անտառակներ, առուներ... և բնակության կոմպակտ վայրերի՝ թաղամասեր, փողոցներ, անվանումների ուսումնասիրությունը, պակաս կարևորություն չունի, այն վարզացման մեծ ներուժ ունեցող ենթահամակարգ է:

Տեղանվան համար հիմք դարձող բառի ընտրությունը որոշակիորեն կախված է նշանակվող օբյեկտի բնույթից. ջրանունները խիստ հազվադեպ են ունենում անձնանուն արմատներ կամ սեռականաձև (պատկանելություն արտահայտող) կառույցներ: Նույնը վերաբերում է լեռնանուններին, նրանց հիմքում մեծավմասամբ լինում են որևէ արտաքին հատկանիշ արտահայտող բառ՝ գծագրությունը, գույնը, բուսական, կենդանական աշխարհները, գեղագիտական կերպը, օրինակ՝ Գագաթածակ, Լիճկատար, Ընկուզուտ, Զուլաքար, Ընձաքար, Ծրախ, Նղչերվասար, Թռչնասար, Այծպտկունք, Մաղկաձուր, Գեղասար, Գեղաքար, Աղուսար... Կամ պարզապես աշխարհագրական համապատասխան եզրեր՝ Գետիկ, Գետք, Մովակ, Մովք, Բլուր, Բլուրք, Դաշտ, Անձավ, Այլք, Քարանձավ, Զորք, Քարինք և այլն: Հաճախ տեղանունը հաղորդում է օբյեկտի հատկանիշները փոխաբերությամբ, ինչպես՝ Մեղրագետ, Արյան բլուր, Արունք, Դժոխածոր, Սատանի սար, Երազամուլյն, Միծաղարեր, Քաշասար, Կամակատար...

Միկրոտեղանունները առավել մոտ են հասարակ գոյականներին, այսինքն՝ ուլիսֆի մանր տարրերի կամ շինությունների անուններին՝ առու, ձոր, հանդ, փոս, թավուտ, փողոց, շենք, ուստի դրանք նվազ ձևայնացած են, դեռևս տեղանուն դառնալու ճանապարհին են: Այսպիսի տեղանունները հաճախ նկարագրական բառակապակցություններ են՝ Սարից այն կողմ, Բարգու դիմաց, Զրհորից ձախ, Երեք կղզիների մոտ, Կամրջի բերանին և այլն: Քանակի տեսանկյունից միկրոտեղանունները անհաշիվ են: Միկրոտեղանունների ուսումնասիրությունն արդիական է, որովհետև այն բացահայտում է տեղանվան առաջացման և կիրարկվելու գործընթացները, չէ որ այժմ բավական դժվար է ականատես լինել որևէ խոշոր օբյեկտների անվան առաջացմանը:

Ըստ տեղանվան հիմքում ընկած բառարմատի հասկացական ծավալի՝ տարբերակվում են տեղանունների հետևյալ տեսակները՝ Ա) Բնական երևույթների հիման վրա առաջացած տեղանուններ, սրանք իրենց հերթին բաժանվում են երկու ենթատեսակի՝ 1) զուտ բնական երևույթների և օբյեկտների հիմքի վրա ձևավորված և 2) մարդու կենսագործունեության արդյունքում առաջացած երևույթներից ամենցված տեղանուններ: Բ) Ոչ բնական

կրճույթների հիման վրա առաջացած տեղանուններ, սրանք գաղափարապես տեղանուններն են⁴:

Տեղանունները նշաններ են՝ կողմնորոշիչ նշաններ, որոնք ի սկզբանե կրում են որոշակի տեղեկություններ նշանակվող օբյեկտի մասին՝ շնորհիվ իրենց հիմքում ընկած բառերի իմաստի: Ժամանակի հետ՝ հատկապես հնչյունական ձևափոխությունների հետևանքով սրանք կորցնում են այս տեղեկատվական բնույթը՝ վերածվելով մաքուր խորհրդանիշների՝ զերծ առարկայի մասին որևէ ակնարկից կամ հուզական-գաղափարական գնահատականից՝ Արաքս, Երասխ, Մասիս, Շուշի, Արցախ... Այսքանով, սակայն, հասկացական փոփոխությունների գործընթացը չի ավարտվում. նշան-տեղանվան մեջ սկսում է ձևավորվել տեղեկատվական և զգացական որոշակի բովանդակություն: Հնագույն շերտի տեղանունները, օրինակ, պարունակում են հարուստ տեղեկություններ ավյալ տարածքի անցյալի վերաբերյալ՝ ռելիեֆը, բուսական և կենդանական աշխարհները, կրոնական հավատալիքները, ազգաբնակչությունը, նրանց զբաղմունքը և այլն: Շրջապատը հարափոփոխ է. գետերը շորանում են, լեռները փլուզվում, անգամ ողջ մայրցամաքներ են այլակերպվում, ազգությունները ծնվում են ու մեռնում, իսկ նրանց գոյության միակ վկաները մնում են տեղանունները: Այնուհետև, տեղանունների շահագրգիռ վերլուծությունը շատ բան կարող է տալ մեր լեզվի պատմության հնագույն շրջանների վերաբերյալ: Որքան զգալի է տեղանվան տարիքը, այնքան մեծ է նրա իմաստային բեռնվածությունը: Ուստի տեղանվանության մեջ այժմ նրկատվող ոգևորությունը անձնանուններով անվանակոչելու սկզբունքով երկսայրի սուր է. մի կողմից մենք պնդում, անցյալի մոռացության գրկից հանում ենք մեր պատմության մեջ առավել կամ պակաս հետք թողած դեմքերին, սակայն մյուս կողմից՝ ջնջում ենք պատմական բազմաթիվ իրողություններ Հայոց աշխարհում կատարված տեղաշարժերի, դեպքերի ու գործերի մասին, պատմությունը միայն անհատներով չի սահմանափակվում, և պետք չէ աղքատացնել մեր բառապաշարն ու մտածելակերպը, սահմանափակվել արհեստական, կամ թեկուզ իրական կուռքերով, որոնք մի օր կարող են գահավիժել: Այս տեսանկյունից խիստ հրատապ է տեղանունների գոյապահպանության խնդիրը: Վերանվանման գործընթացը պետք է հանգեցնի ոչ թե գաղափարական դանազան շղարշներով պարուրված տեղանունների փոխարին նոր ու գեղեցիկ թվացող անունների ստեղծման, այլ դրանց որքան հնարավոր է հին, բնիկ ձևերի վերակենդանացման: Դարերից եկող այդ տեղանուններն արտացոլում են մեր նախնիների անշաժ ճանապարհը՝ իր բոլոր վայրիվերումներով: Ի վերջո, նոր անուններ պետք է տրվեն հիմնականում նոր օբյեկտներին ու երևույթներին, նախորդ սերունդներն արդեն անվանակոչել են եղածը, և հարկ չկա սրբագրելու նր. ց արածը՝ ելնելով զուտ գեղագիտական կամ գաղափարական սկզբունքներից: Գեղեցիկի ըմբռնումները տարբեր ժամանակներում տարբեր են, իսկ գաղափարները՝ փոփոխական, հարաբերականորեն հաստատուն են միայն բնական աշխարհը և ժամանակի քննությունը բռնած մարդկային կերտվածքները՝ իրենց բնիկ անուններով:

Н. А. ДИЛБАРЯН — Место топонимов в общей лексике языка. Их возникновение и функционирование. — Топонимика не создает для себя новых корней или грамматических форм, основой для топонимов становятся лексико-грамматические единицы данного языка. В настоящей статье анализируется процесс возникновения топонимов.

⁴ Տե՛ս՝ В. А. Никонов, *ԳՉ. աշխ.*, էջ 149—160, В. А. Жучневич, *Общая топонимика*, Минск, 1968, էջ 324—335: